ՆԱԽԱԳԻԾ

Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«___» _____ 2026թ. №_____-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի «Երևան քաղաքի սեփականություն հանդիսացող գույքը օգտագործման տրամադրելու և օտարման 2026 թվականի ծրագրի (ներառյալ՝ իրավաբանական անձի կանոնադրական կապիտալում համայնքի մասնակցության) վերաբերյալ» հ.463-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1.Երևան համայնքի սեփականություն հանդիսացող (անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 13.12.2006թ. հ.2163423 վկայական) Հ.Ավետիսյան փողոցի հ.5/4 հասցեում գտնվող 933.52քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2029 թվականի հոկտեմբերի 1-ը ժամկետով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականություն հանդիսացող Հ.Ավետիսյան փողոցի հ.5/4 հասցեում գտնվող 933.52քմ մակերեսով տարածքն անհատույց օգտագործման իրավունքով, մինչև 2029 թվականի հոկտեմբերի 1-ը ժամկետով տրամադրել «Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությանը:

Հ.Ավետիսյան փողոցի հ.5/4 հասցեում գտնվող գույքը (շինություն՝ 3813.3քմ, հողամաս՝ 9233.25քմ) համաձայն անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման 13.12.2006թ. հ.2163423 վկայականի հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Երևան քաղաքի ավագանու 30.11.2021թ. հ.481-Ա և Երևանի քաղաքապետի 04.01.2022թ. հ.13-Ա որոշումների հիման վրա Նոր նորք վարչական շրջանի, Հ.Ավետիսյան փողոցի հ.5/4 հասցեում գտնվող 933.52քմ մակերեսով տարածքի համար 25.01.2022թ. կնքվել է գույքի անհատույց օգտագործման հ.256 պայմանագիրը՝ որի գործողության ժամկետը սահմանվել է մինչև 2024 թվականի նոյեմբերի 30-ը: Պայմանագրից ծագող իրավունքը ստացել է պետական գրանցում (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 01.02.2022թ. հ.01022022-01-0264 վկայական):

«Առաքելություն Հայաստան» բարեգործական հասարակական կազմակերպությունը առողջապահական ծառայություններ է մատուցում բազմաթիվ միայնակ տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների, ապաստան հայցողների և այլ սոցիալապես անապահով և խոցելի ընտանիքների: Կազմակերպությունը ներդրել և զարգացրել է սոցիալ-առողջապահական ծառայությունների մատուցման տարբեր ենթակառուցվածքներ՝ ցերեկային կենտրոններ, բարեգործական ճաշարաններ, ուսումնական կենտրոններ, սոցիալական տուն, որոնք հնարավորություն են ընձեռնում շահառուներին բազմաբնույթ սոցիալ-առողջապահական ծառայություններ ստանալ ոչ միայն համայնքներում, այլ նաև իրենց տներում:

Քննարկվող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու վերաբերյալ Երևան քաղաքի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր», «Ազգային առաջընթաց», «Մայր Հայաստան», «Հանրապետություն» և «Հանրային ձայն» խմբակցությունները առարկություններ չեն ներկայացրել և տվել են դրական դիրքորոշում:

Ելնելով վերը շարադրվածից և ղեկավարվելով Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 3-րդ կետով՝ նախապատրաստվել է Երևան քաղաքի ավագանու սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ